ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
Հասարակական գիտություններ № 4, 1965 Общественные науки

Սթ. Մ. Հակոբյան

ԱՐԵՎՄՏԱՀԱՅԵՐԻ ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ 1915—1916 ԹԹ.

Օսմանյան կայսրությունում հայերի զանգվածային ջարդերի ժամանակ տարբերայնորեն արևմտահայերի ինքնապաշտպանության օջախներ առաջացան Վանում, Շատախում, Վանա լճի Լիմ կղզում, Բաղեշում, Շապին-Գարահիսարում, Մուշում, Սասունում, Մարաշում, Զեյթունում, Խնուսում, Խարբերդում, Բաբերդում, Մուսա-Լեռան գագաթում, Ուրֆայում, Պարտիզակում և այլ վայրերում։

Որ ծավալով ամենախոշորը և հաջողը Վանի հայերի ինքնապաշտպանությունն էր։ Նրանք ամենից առաջ գուշակեցին թուրքական իշխանությունների մտադրությունները և լավ պատրաստվեցին դիմադրության։ Մոտ 1000 ամելիներ, սպասվող դատաստանից փրկվելու նպատակով՝ դասալքեցին թուրքական բանակի շարքերը և թաքնվեցին Վանի հայերի մոտ։ Վանի նահանգապետ (վալի) Ջևդեթ բեյը հայերից պահանջեց նրանց իշխանությանը հանձնել։ Բայց Վանի հայերը, իմանալով ամելիներին սպասվող խոշտանգումների մասին, չկատարեցին այդ պահանջը։ Միևնույն ժամանակ համոզված լինելով, որ Ջևդեթը իրենց չի ների և անպայման ձեռք կառնի պատժիչ միջոցներ, վանեցիները սկսեցին ամրացնել քաղաքի Այգեստան և Միջնաբերդ հայկական թաղամասերը։

1915 թ. ապրիլի 7-ին Ջևդեթը գերազանց ուժերով գրոհեց այդ թաղամասերի վրա, բայց հայերը ետ մղեցին գրոհը։ Այդ օրվանից սկսվեցին Վանի հայկական թաղամասերի պաշտպանների հերոսական սխրագործությունները։ Պատրաստվեցին պաշտպանողական կառուցումներ։ Վանի պաշտպանության բոլոր 80 հանգույցները իրար հետ միացվեցին ստորերկրյա ուղիներով և խրամատներով։

Ինքնապաշտպանության համար անհրաժեշտ ռազմամթերքը հայերը պատրաստում էին իրենց ուժերով։ Նրանք օրեկան պատրաստում էին մինչև 200 փամփուշտ և բազմաթիվ ձեռքի նռնակներ։ Հայ վարպետների ստեղծած պղնձյա հրասանդների հեռահարությունը հասնում էր մինչև 2000 մ, բացի դրանից, նրանց տրամադրության տակ էր թուրքերից դրված երկու թնդանոթ։ Պաշտպաններին օգնում էին նաև նրանց ընտանիքների անդամները՝ կանայք և երեխաները։ Մարտիկների թիվը հասնում էր մոտ 40.000 մարդու։ Բայց սննդամթերքի անբավարարության հետևանքով, վրա հասավ սովի մատնվելու վտանգը, սպառվեց ռազմամթերքը։

Վանի պաշտպանները ստիպված եղան դիմել ռուս հրամանատարության օգնությանը։ Նրանք Կովկասի ռազմաճակատի շտաբ ուղարկեցին իրենց սուրհանդակին մի գրությունով, որտեղ ասվում էր. «Գավառում սպանված է մինչև 6.000 մարդ։ Վանը և Շատախը համառ դիմադրում են... Լարում ենք մեր վերջին ուժերը։ Ամեն օր սպասում ենք ռուսական օգնության։ Աղաչում ենք շտա-

պել։ Հետո ուշ կլինի»[1]։ Այդ վիճակի մասին հաղորդվեց ռուսական բանակի գլխավոր շտաբին, իսկ այնտեղից Փարիզ և Լոնդոն[2]։

Այսպիսով, դեռ 1915 թ. ապրիլին աշխարհն իմացավ Վանի հայերի հերոսական ինքնապաշտպանության մասին։

1915 թ. մայիսի 3-ին, 27-օրյա կռիվներից հետո, քաղաքի պաշտպանները տեղեկացան, որ իրենց վրա հարձակվող թուրքական զորքերը, ռուսական բանակի մոտենալու կապակցությամբ, դադարեցրին պաշարումը և հեռացան։ Այդ ժամանակ այգեստանցիները դուրս եկան իրենց թաքստոցներից և ոչընչացնելով մնացած թուրքական ժամապահներին՝ գրավեցին Թոփրակ-Կալե և Հաջի-Փեքիրի թուրքական թաղամասերը, իսկ Միջնաբերդի պաշտպանները՝ վարչական շենքերը, ռազմական զորանոցները, բերդը, դպրոցները, մզկիթը և բանտը։ Մայիսի 4-ին Այգեստանի և Միջնաբերդի պաշտպանները, որոնք մինչ այդ գործում էին առանձին-առանձին՝ միացան։ Մայիսի 7-ին քաղաք մտան նաև ռուսական զորքերը և հայկական կամավորական ջոկատները[3]։

Ինքնապաշտպանության առաջին շաբաթից հետո դեպի Վան սկսեցին տեղափոխվել շրջակա գյուղերի բնակիչները՝ պաշտպանողական համառ մարտեր մղելով թուրքական զորքերի դեմ։ Առանձնապես ծանր էին Շատախի Դարման, Շուշանց և Վարագ հայկական գյուղերի բնակիչների մղած մարտերը։ Շուշանցիները և վարագցիները երկու շաբաթ թշնամուն համառ դիմադրեցին, ճեղքեցին թշնամու օղակը և անցան դեպի Վան, միացան Այգեստանի պաշտպաններին։ Իսկ Դարման գյուղի բնակիչներին, որոնք չկարողացան անցնել Վան, Այգեստանից օգնություն ուղարկվեց։ Թշնամուն դիմադրություն ցույց տվեցին Արձակ, Փեսանդաշտ, Բերդ և Վանի վիլայեթի մի շարք ուրիշ հայկական գյուղերի բնակիչները[4]։ Կազմակերպված էր Սպարկերտ գյուղի բնակիչների ինքնապաշտպանությունը։ Մի ամբողջ ամիս (մայիս) նրանք մանևրային հաջող մարտեր էին մղում թուրքական զորամասերի դեմ[5]։

Ինքնապաշտպանությունը լավ էր կազմակերպված նաև Վանա լճի Լիմ կղզում։ Այստեղ թուրքական դահիճներից թաքնվեցին մոտ 8000 հայեր։ Դիմանալով թուրքերի երկամսյա պաշարմանը, Լիմի հերոսները արիաբար դիմադրեցին մինչև ռուսական զորքերի մոտենալը[6]։

Բիթլիսի վիլայեթում թշնամուն հակահարված տվեցին Շամիրամ գյուղի բնակիչները։ Նրանք բարձրանալով Նեմրութ լեռը, այն վերածեցին պաշտպանական ամրոցի։ Շամիրամցիները Նեմրութ լեռան վրա քսան օր մնալուց հետո, ճեղքեցին թուրքական զորքերի օղակը և շրջակա հայկական գյուղերի բնակիչների հետ միասին դուրս եկան պաշարումից[7]։

---

1 ЦГВИА. ф. 2000с, оп. 1, д. 810, л. 297.

2 Տե՛ս նույն տեղում։

3 Վանի հայերի ինքնապաշտպանության մասին տե՛ս ՀՍՍՌ ԿՊՊԱ, ֆ. 242, ց. 1, գ. 29, թթ. 1—77, «Կոչնակ», 1915, էջ 55—60, 83—85, 109—111, 167—170, 241—244, 615, 785—787, 933—934, «Վան-Տոսպ», 1915, № 22—23, „Армянский вестник", Москва, 1916, № 18, „Армяне и война", Одесса, 1916, № 6, стр. 79—80։ «Դեսպան Մորգենթաուի պատմածները», Պոլիս, էջ 292—293, „Оборона Вана", Москва, 1917; „Le traitement des armeniens dans l'Empire Ottoman (1915—1916)", Paris, 1916, p. 175—197.

4. Ե. Խ. Ռշտունի, Վանի դեպքերը և ինքնապաշտպանությունը, «Կոչնակ», 1915։ Արտակ Դարբինյան, Հայ ազատագրական շարժման օրերին, էջ 292—294, 300, 305։

5 «Մշակ», 17 հուլիսի, 1915, № 154, էջ 1։

6 ՀՍՍՌ ԿՊՊԱ, ֆ. 45, գ. 22, թ. 182։

7 Տե՛ս «Կոչնակ», 27 նոյեմբերի, 1915, № 48, էջ 1074։

Մուշի հովտում ինքնապաշտպանություն կազմակերպեցին Ալիջան, Ուրունկ, Հոմս, Առաքելոց վանքի և այլ գյուղերի բնակիչները։ Հայերի ջարդը այս շրջանում դնկավարող ավազակ Գիլմի բեյը ասկյարների երեք գումարտակով և Մուսա բեկի ու Նազրեթ շեյխի քուրդ հորդաներով 1915 թ. հունիսի 29-ին ձերբակալեց մոտ 500—600 մշեցիներ, նրանց քաղաքից դուրս տարավ և գնդակահարեց։ Միայն դրանից հետո դահիճներին հաջողվեց ներխուժել Մուշ, պաշարել քաղաքը և 24 ժամ շարունակ գնդակոծել այն։ Քաղաքի պաշտպանները մեծ թվով զոհեր տվեցին, բայց անձնատուր չեղան։ 10—12 հազար մշեցիների հաջողվեց թաքնվել Ջոր դժվարամատչելի թաղամասում, որտեղից նրանք 1915 թ. հուլիսի 5-ին գիշերը խիզախ մարտերով, կորցնելով իրենց կազմի համարյա կեսը դուրս եկան շրջապատումից։ Լեռներում, միանալով Մուշի շրջակա գյուղերի թաքնված գյուղացիների հետ, կրկնապատկելով իրենց ուժերը, նրանք վերսկսեցին պայքարը։ Ստ մղելով թուրքական գրոհները, նրանք կենտրոնացան Կան լեռան վրա և համատեղ ուժերով ինքնապաշտպանություն կազմակերպեցին։ Բայց դա երկար չտևեց։ Փամփուշտների պակասը, սովի սպառնալիքը մշեցիներին ստիպեցին թողնել Կան լեռը։ Նրանք փոքր խմբերով փորձեցին թափանցել թուրքական կորդոնները և հեռանալ։ Սակայն այդ հերոս մարտիկներից միայն երեսուն մարդու հաջողվեց փրկվել, մնացածները զոհվեցին[8]։

Իրենց ֆիզիկական գոյությունը պաշտպանելու համար պայքարի էին ելել նաև սասունցիները։ Թուրքական զորամասերը 1915 թ. հուլիսի կեսերին շրջապատեցին Սասունը և այն կտրեցին արտաքին աշխարհից։ Պակասում էր հացը, աղը, զենքը։ Չնայած դրան, սասունցիները վճռեցին դիմադրել հարձակվող թշնամուն։ Նրանք առաջին օրերին հեշտությամբ ետ էին մղում թշնամու գրոհները։ Սպառվող ռազմամթերքի պաշարը լրացնելու նպատակով երեք օր հետո, սասունցիները ստիպված եղան դուրս գալ իրենց թաքստոցներից և խիզախ հարձակումների դիմել։ Նրանց դրությունն այնքան ծանր էր, որ ստիպված էին փամփուշտները լցված վառոդը բաժանել երկու մասի, որպեսզի կարողանան գործի դնել նաև կայծքարե հրացանները։

Թուրքական հրետանին աստիճանաբար քայքայում էր սասունցիների ամրությունները, նոսրանում էին նրանց շարքերը։ Երբ արդեն սպառվում էին վերջին փամփուշտները, սասունցիները որոշեցին ինչ գնով էլ լինի ճեղքել թուրքական շրջապատումը, գնալ հյուսիս՝ դեպի ռուսական զորքերը։ Դրա համար նրանք բաժանվեցին փոքր խմբերի և դիմեցին հակագրոհների։ Անհավասար մարտերում նրանց մի մասը ոչնչացվեց, իսկ մյուս մասին հաջողվեց թափանցել անտառները։ Նրանց հետապնդող թուրքերը դիմեցին նենգ միջոցների։ Վերջիններս լուրեր տարածեցին այն մասին, թե իբրև կառավարությունը հայերին ներում է շնորհել։ Սովի մատնված հազարավոր սասունցիների ոչինչ չէր մնում անել, քան հավատալ այդ լուրերին, հանձնվել թշնամուն։ Այդպես նրանք թուրքերի ձեռքն ընկնելով՝ տեղն ու տեղը ոչնչացվեցին։ Սակայն հազարավոր հայեր չենթարկվեցին թուրքական պրովոկացիային, բարձ-

---

8 Մուշի հայերի ինքնապաշտպանության մասին տե՛ս «Մշակ», 1915, № 207, էջ 1, «Կոչնակ», 1915, № 35, էջ 743, № 49, էջ 1100. „Армянский вестник", 1916, № 10, стр. 21, „Армяне и война", 1916, № 4, стр. 47, „Кавказ кое слово", 1915, № 231, стр. 2, Վ. Փափազյան, Իմ հուշերը. հ. Բ, Պեյրութ, 1952, էջ 367—380, „The treatment of Armenians in the Ottoman Empire", London, 1916, p. 82.

բացան լեռները և ավելի խորացան անտառներում։ Երբ ռուսական զորքերը 1916 թ. գրավեցին Սասունի շրջանը, անառիկ լեռներից ցած իջան անընկճելի մարտիկների, կանանց և երեխաների խմբեր[9]։ Մի վկայությամբ, այդ միջոցով փրկվեց մոտ հինգ հազար հայ[10]։

Արևմտահայերի ինքնապաշտպանության մանր օջախներ առաջացան նաև Էրզրումի վիլայեթի Խնուսի կազայում։ Այստեղ Ղարա-Ջոբան գյուղի մի խումբ հայեր մարտերով ճեղքեցին թուրք-քրդական օղակումները և դուրս եկան ռուսական զորքերի դասավորության շրջանը։

Այդ նույն կազայի մի ուրիշ գյուղում հայ պատանիների մի խումբ քաջաբար ետ էր մղում թուրք դահիճների գրոհները։ Երբ վերջացավ փամփուշտի պաշարը, այդ խումբը ցրվեց տարբեր ուղղություններով[11]։

Բաբերդ քաղաքի շրջանում հայ պատանիների մի ուրիշ խմբի հաջողվեց ճեղքել թշնամու օղակը, անցնել լեռները, ապա համարձակ հարձակումներ կատարել թշնամու վրա։ Բաջերը կարողացան դիմանալ մինչև ռուսական զորքերի գալը[12]։

Սվազի վիլայեթում թշնամուն համառ դիմադրություն ցույց տվեցին Շապին-Գարահիսար քաղաքի բնակիչները։ Նրանց ինքնապաշտպանությունը տևեց 1915 թ. հունիսի 2—28-ը։ Սկզբում շապին-գարահիսարցիները, ամրությունների վերածելով իրենց փողոցներն ու տները, պաշտպանվում էին հենց քաղաքում։ Հետո նրանք, ավելի քան 5000 մարդ (երեք քառորդը կանայք ու երեխաներ), բարձրացան քաղաքամերձ ամրոցը։ Նրանցից կարողանում էին զենք գործածել միայն 250-ը։ Շապին-գարահիսարցիները արիաբար ետ էին մղում թշնամու բոլոր գրոհները։ Տեսնելով, որ զենքի ուժով անհնար է ընկճել հերոս պաշտպաններին, թուրքերը կրկին դիմեցին խաբեության, խոստանալով զենքը ցած գնողներին մինչև անգամ ապահովել բնակարաններով՝ Կերասուն կամ Սվազ քաղաքների շրջակայքում (գարահիսարցիների տները արդեն լրիվ քանդված էին)։ Բայց ամրոցի ռազմիկները չհավատացին թուրքական հրամանատարության նենգ խոստումներին։ Ամրոցի վրա հարձակվող զինված թշնամիների թիվը հասնում էր մինչև 5000—6000-ի։ Հաշվի առնելով ջրի, պարենի և ռազմամթերքի անբավարարությունը շապին-գարահիսարցիները ստիպված եղան թողնել ամրոցը և փոքր խմբերով փորձեցին ճեղքել թուրքական զորամասերի դիրքերն ու դուրս գալ շրջապատումից։ Բայց թուրք դահիճների ձեռքից ազատվեց և նախօրոք պայմանավորված Թամզարան վայրը հասավ միայն 870 մարդ, մնացածները սպանվեցին կամ ծանր վիրավորվեցին։ Թամզարան հասածների վիճակը նույնպես նախանձելի չէր։ Թուրքական զորքերը այստեղ նրանց շրջապատեցին։ Շապին-գարահիսարցիները կրկին պաշտպանական դիրքեր գրավեցին։ Անհավասար ու դաժան մարտերում նրանք ընկան հերոսական մահով։ Շապին-գարահիսարցիներից միայն երկուսին հա-

---

9 Սասունցիների ինքնապաշտպանության մասին տե՛ս ՀՍՍՌ ԿՊՊԱ, ֆ. 227, ց. 1, գ. 463, էջ. 1—5, «Համբավարեր», 1916, № 43, էջ 1355—1356, «Մշակ», 1915, № 207, էջ 1, «Հայաստան», 1917, № 112, էջ 2, „Армянский вестник", 1916, № 4, էջ 1, № 10, էջ 21, № 23, էջ 4։

10 Տե՛ս Վ. Փափազյան, Իմ հուշերը, հ. Բ, էջ 416։

11 Տե՛ս Р. Бекгульянц. Вокруг Хныса, „Армянский вестник", 1916, № 41, էջ 12—13։

12 Տե՛ս Р. Бекгульянц. 5 дней в Байбурте. „Армянский вестник", 1916, № 30, էջ 17։

ջողվեց դուրս պրծնել շրջապատումից և հասնել ռուսական զորքերի կողմից գրավված Տրապիզոն քաղաքը[13]։

Թշնամուն հերոսական դիմադրություն ցույց տվեցին Սվազի վիլայեթի Բյուրկ, Զարշամբա, Խուրշինլու և մի շարք այլ գյուղերի բնակիչներ։ Սվազի մի խումբ հայեր ինն ամիս թուրքական զորքերի դեմ մղեցին մանևրային պաշտպանողական մարտեր և կարողացան Սվազի մոտերքից կռիվներով անցնել մինչև Սև ծովի ափը, և գրավելով թուրքական մի առագաստանավ, թշնամու կրակի տակ մեկնեցին դեպի Բաթումի[14]։

Զեյթունն իր 36 գյուղերով՝ 60.000 բնակչությամբ հատուկ տեղ է գրավում հայ ժողովրդի ազատագրական շարժման պատմության մեջ։ Զեյթունը միշտ էլ եղել է հարստահարված ու խոշտանգված հայերի հույսերի և վրեժխնդրության խորհրդանիշը։ Զեյթունցիներին խորթ էին վախկոտությունն ու աղերսանքը։ Փոքր մարզը կառավարում էին չորս տոհմային իշխաններ, թուրք կառավարությանը վճարելով միայն նոմինալ տուրք։ Թուրք իշխանություններին դուր չէր գալիս Զեյթունի կիսաանկախ վիճակը. դրա համար էլ նրանք հաճախ այդտեղ էին ուղարկում պատժիչ արշավախմբեր։

Զեյթունցիները դիմացել են 41 պատերազմների և 16 ռազմական ընդհարումների, պաշտպանելով իրենց կիսաանկախությունը։ 1914 թ. օգոստոսին այսինքն մինչև Թուրքիայի պատերազմի մեջ մտնելը, 600 թուրք զինվորներ Մարաշի մյուտեսարիֆ Հայդար փաշայի գլխավորությամբ մտան Զեյթուն։ Հայդար փաշան ձերբակալեց առավել աչքի ընկնողներին և մարտունակներին, բռնությամբ խլեց մնացածների զենքերը։ Ձերբակալված զեյթունցիներին Հայդար փաշան տարավ Մարաշ, որտեղ բոլորն էլ անխտիր ոչնչացվեցին։ Այնուհետև Զեյթուն մտավ պատժիչ արշավախումբը, կայմակամ Հուսեյին-Հուսնիի և ժանդարմերիայի գնդապետ Սուլեյմանի գլխավորությամբ։ Բանդիտները խոշտանգում էին զեյթունցիներին, բռնաբարում նրանց կանանց և աղջիկներին։ Թուրքական իշխանությունների նման արարքները ծայր աստիճանի հասցրին զեյթունցիների ցասումն ու զայրույթը։ 1915 թ. փետրվարին զեյթունցիները որոշեցին հարձակվել թուրքական տեղական վարչության շենքի վրա և գրավել այնտեղ գտնված զենքը։ Բայց Զեյթունի վերին խավի դավաճանությունը խանգարեց իրագործել այդ որոշումը։ Ավելին. դավաճանության հետևանքով այդ որոշման նախաձեռնողների մի մասը ձերբակալվեց, իսկ մյուս մասը թաքնվեց լեռնային վանքում։ Զեյթունցիները միջոցներ ձեռնարկեցին օգնելու իրենց հերոսներին։ Զենք ձեռք բերելու նպատակով, նրանք դիմեցին Կովկասյան բանակի շտաբ՝ հայտնելով, որ զենքը հեշտությամբ կարող է հասնել իրենց, եթե անգլիական կամ ֆրանսիական նավերը այն դուրս բերեն Միջերկրական ծովի ափը։ Չնայած զեյթունցիները զենք չստացան, բայց նրանք չընկճվեցին, այլ որոշեցին աջակցել խիզախներին իրենց ունեցած միջոցներով։ Թուրքական իշխանությունները իմանալով զեյթունցիների այդ

---

13 Շապին-գարահիսարցիների ինքնապաշտպանության մասին տե՛ս Հակոբ Տեր-Հարությունյան, Շապին-Գարահիսարի ապստամբությունը, Թիֆլիս, 1917, էջ 72—115։ Արամ Հայկազ, Շապին-Գարահիսարն ու իր հերոսները, Նյու-Յորք, 1957, էջ 121—183, «Կոչնակ», 1915, № 37, էջ 793։ Հարությունյան Հայկազ, Շապին-Գարահիսարի ապրստամբությունը, 1955։

14 Տե՛ս „Le traitement des armeniens dans l'Empire Ottoman (1915—1916)", Paris. 1916, էջ 298—304։ Զ. Եսայան, Մուրադի ճամբորդությունը Սվազեն Պաթում, Պոսթըն, 1920։

որոշման մասին, սկսեցին ուժեր հավաքել։ Զեյթունում թուրք զինվորների թիվը հասավ 5000-ի։ 1915 թ. մարտի 24-ին Զեյթուն ժամանեցին թուրքական կառավարության գործակալները, որոնց թվում էր և գերմանացի Բլանկը։ Նրանք Զեյթունի վերին խավի խորհրդակցություն հրավիրեցին և, սպառնալիքի տակ, առաջարկեցին իրենց հանձնել վանքի պաշտպաններին։ Զեյթունցիների վերնախավը հրաժարվեց վանքի խիզախների պաշտպանությունից։

Թուրքերը 1915 թ. մարտի 25-ին գրոհեցին վանքի վրա։ 12 ժամ շարունակվեց կատաղի ճակատամարտը, թուրքերը կորցրին մոտ 300 զինվոր։ Վանքի պաշտպանները գիշերը ճեղքեցին թուրքական կորդոնը և անցան լեռները։ Հառավոտյան թուրքերը գրավեցին դատարկ վանքը և կատաղորեն այն այրեցին։ Դրանից 15 օր հետո, 1915 թ. ապրիլի 9-ին, թուրքական իշխանությունները սկսեցին արտաքսել Զեյթունի հայ բնակչությանը[15]։ Միաժամանակ կատարվեց հայերի արտաքսումը նաև Մարաշից։ Այստեղ արտաքսումից և ջարդից փրկվեցին միայն 50 պատանիներ, որոնք հեռացան լեռները, միանալով այնտեղ գտնվող զեյթունցիներին, նրանց հետ միասին շարունակեցին պայքարը այնքան ժամանակ, մինչև որ ընկան հերոսական մահով[16]։

Թուրքական ջարդարարներին հաջող դիմադրություն ցույց տվեցին Կիլիկիայի հարավ-արևելյան ծայրամասի վեց հայկական գյուղերի բնակիչները՝ սուեդիացիները։ 1915 թ. հուլիսի 13-ին թուրքական իշխանությունները նրանց հրամայեցին պատրաստվել արտաքսման։ Տեուսյինների մի փոքր մասը՝ 60 հնտանիք Բիթիաս գյուղի բողոքական եկեղեցու ավագ քահանա Նոխուդյանի գլխավորությամբ ենթարկվեց այդ հրամանին։ Մնացածները որոշեցին դիմել ինքնապաշտպանության։ Այդ նպատակով նրանք բարձրացան Մուսա-լեռան (Ջեբել-Մուսայի) գագաթը, իրենց հետ վերցնելով պարեն և ռազմամթերք, այդ թվում 120 նոր սիստեմի հրացան, մի քանի հարյուր հին սիստեմի ատրճանակ և որոշ քանակությամբ վառոդ։ Լեռը բարձրանալուց հետո, սուեդիահայերը պաշտպանություն զեկավարելու համար, գաղտնի քվեարկությամբ, ընտրեցին հատուկ կոմիտե, որն անմիջապես անցավ գործի։ Լեռան գագաթի բոլոր անցուղիների մոտ նշանակվեցին դիտորդներ, կազմակերպվեցին գերազանց հրացանաձիգների պահեստային խմբեր, հանձնարարություններ տրվեց պաշտպանության ամեն մի մասնակցի։ Թուրքական գրոհը Մուսա-լեռան վրա սկսվեց 1915 թ. հուլիսի 21-ին, բայց վերջացավ անհաջող։ Թուրքերը որոշեցին թնդանոթի կրակի տակ ճնշել լեռան պաշտպանների դիմադրությունը, սակայն հայ նշանառուներից մեկին հաջողվեց ոչնչացնել թշնամու թնդանոթի անձնակազմը, որի հետևանքով, թուրքերը նահանջեցին և սկսեցին պատրաստվել երկրորդ գրոհի։ Նրանք Մուսա-լեռան ստորոտում նախկինում ունեցած 2000-ի փոխարեն կենտրոնացրին մոտ 3000 զինվոր, 4000 բաշիբոզուկ և մի քանի հրանոթ։ Իսկ Մուսա-լեռան պաշտպանների ուժերը զգալիորեն քիչ էին՝ մոտ 5000 հոգի, որոնցից զենք կրելու ընդունակ էին միայն 500-ը։ Չնայած դրան Մուսա-լեռան նշանառուները հմտորեն շարքից դուրս էին հանում թուրքական հրանոթների անձնակազմը և խափանում նրանց գրոհները

---

15 Զեյթունցիների ինքնապաշտպանության մասին տե՛ս Դր. Հ. Դալստյան. Մարաշ, Նյու-Յորք, 1934, էջ 171—177, «Կոչնակ», 1915, № 32, էջ 672, № 34, էջ 721—722, № 51, էջ 1138։ „Международные отношения в эпоху империализма", серия III, т. VII, ч. I, стр. 304—305. „Quelques documents", Fase II, Genève. 1916, p. 99—104.

16 Տե՛ս Դ. Դալստյան, նշված աշխատ., էջ 773։

լեռան պաշտպանները հաճախակի հարձակումներ էին գործում թշնամու վրա։ Այդ հարձակումներից մեկի ժամանակ, հաջողվեց ոչնչացնել մոտ 200 թուրքական զինվոր, գրավել 7 մաուզեր, 2500 փամփուշտ։ Բայց հարձակվող թուրքական զորքերի թիվը օրեցօր ավելանում էր։ 1915 թ. սեպտեմբերի սկզբներին թուրքերի հրամանատարությունը հանձնարարվեց գնդապետ Ռիֆաթ բեյին։ Մուսա-լեռան պաշտպաններն արդեն ետ էին մղել թշնամու հինգ կատաղի գրոհ և թուրքերին պատճառել էին մեծ կորուստներ։ Իսկ իրենք՝ լեռնցիները ունեին 17 սպանված և 12 վիրավոր։ Բայց ժամանակը անցնում էր։ Պաշտպանների պարենը և ռազմամթերքը սպառվում էր։ Սուեզիահայերի դառը վիճակը, թվում էր կանխորոշված, և նրանց փրկել կարող էր միայն հրաշքը։

Պաշարվածները կարող էին օգնություն ստանալ միայն ծովի կողմից, որին ուղղված էր Մուսա-լեռան բարձր դարափը։ Դարափի ծայրին մուսալեռցիները բարձրացրին երկու մեծ սպիտակ դրոշ, որոնցից մեկի վրա դրոշմված էր կարմիր խաչ, իսկ մյուսի վրա՝ օգնության կոչ։ Ֆրանսիական զրահակիր «Կոշենը» նկատեց Մուսա-լեռան վրա ծածանվող սպիտակ դրոշները։

Մի քանի օր հետո ֆրանսիական նավերը սկսեցին մուսալեռցիների էվակուացիան։ Առաջին հերթին ափին մոտեցած «Ժաննա-դը-Արկ» նավը բարձրացրին կանանց, երեխաներին, վիրավորներին և հիվանդներին։ Վերջում Մուսա-լեռը թողեցին նրա քաջարի պաշտպանները։

Մուսա-լեռան պաշտպանությունը տևեց 53 օր։ Ջարդից ու աքսորից փրկվեց 4700 հայ։ Մուսալեռցիները 1915 թ. սեպտեմբերի 14-ին ժամանեցին Պորտ-Սայիդ, և այնտեղ բնակություն հաստատեցին[17]։

Տրապիզոնի վիլայեթում թշնամուն համառ դիմադրություն ցույց տվեցին մերձսևծովյան Քովաթ-Շափա գյուղի բնակիչները։ Երբ 1915 թ. հուլիսին սկսվեց Տրապիզոնի և նրա շրջանի հայերի ջարդն ու աքսորը, քովաթ-շափացիները թողեցին իրենց տները, բարձրացան գյուղը շրջապատող Եմուրյան սարերը և կազմակերպեցին ինքնապաշտպանություն։ Քովաթ-շափացիների դիմադրությունն այնքան համառ էր, որ թուրքերը որոշեցին դիմել ինքնաթիռների և գերմանական «Բրեսլաու» ռազմանավի օգնությանը։ Բայց թուրքական գրոհները ետ էին մղվում։ Քովաթ-շափացիների հերոսական ինքնապաշտպանության լուրը հասավ Էջմիածին և ամենայն հայոց կաթողիկոսը 1915 թ. սեպտեմբերի 22-ին օգնության կոչով դիմեց Պետրոգրադ. «Եթե նավատորմով շտապ օգնություն չհասցվի, ասված էր կաթողիկոսի հեռագրում, Քովաթ-Շափայի ամբողջ հայ բնակչությունը կկոտորվի։ Ես համոզիչ կերպով խնդրում եմ փրկել իմ հոտը գազազած ֆանատիկոսներից, օգնության գալ անբախտ մարտիկներին, որոնք կռվում են վերջին ուժերը լարելով...»։ Բայց քովաթ-շափացիներին վիճակված էր դեռ երկար պաշտպանողական և մանևրային մարտեր մղել, մինչև ռուսական զորքերի մոտենալը։ Այդ ժամանակա-

---

17 Մուսալեռցիների ինքնապաշտպանության մասին տե՛ս «Կոչնակ». 1915, № 44, էջ 963—965, 999, № 51, էջ 1140—1141, № 52, էջ 1167—1170, „Le traitement des armeniens dans l'Empire Ottoman...", pp. 443–460, „Deutschland und Armenien", Potsdam. 1919, Dok. 193, Toynbee Arnold, Armenian atrocities, The murder of a Nation, London, 1916, p. 32, Վրաց. ՍՍՌ ԿՊԿԱ, ֆ. 2c, գ. 3198, թ. 62, Werfel Franz, Die vierzig Tage des Musa Dagh, Berlin, 1955, Е. К. Саркисян, Экспансионистская политика Османской империи в Закавказье..., Ереван, 1962, стр. 281—283.

միջոցում քովաթ-շափացիները կորցրին իրենց կազմի կեսից ավելին։ 400 պաշտպաններից ողջ մնաց միայն 100—120 մարդ[18]։

Հալեպի վիլայեթում արտաքսման դիմադրեցին Ուրֆա քաղաքի հայերը։ 1915 թ. սեպտեմբերի 29-ից աշխատանքներ սկսվեցին քաղաքի հայկական թաղամասերում ամրություններ ստեղծելու ուղղությամբ։ Ուրֆա քաղաքի 60—80 ոստիկաններին հոկտեմբերի սկզբին միացավ երկու թուրքական վաշտ և հրամանատար նշանակվեց գնդապետ Ֆահթի փաշան։ Ուրֆայի հայերին նա առաջարկեց հանձնվել, բայց վերջիններս մերժեցին նրա առաջարկը։ Հոկտեմբերի 6-ին սկսվեց թուրքերի գրոհը։ Հայերը պաշտպանության համար հմտորեն օգտագործեցին ամեն մի փողոց, ամեն մի տուն։ Հոկտեմբերի 12-ին Ուրֆա ժամանեց թուրքական 3-րդ վաշտը՝ զինված մեծ տրամաչափի հրանոթներով։ Թուրքերը մեծ ուժերով անցան հարձակման և հոկտեմբերի 14-ին գրավեցին հայերի դիմադրության կարևոր կետը՝ հայկական եկեղեցին, իսկ հոկտեմբերի 15-ին երկրորդ կարևոր կետը՝ ամերիկյան միսիայի շենքը։ Հոկտեմբերի 16-ին Ուրֆա քաղաքի հայերի ինքնապաշտպանությունը ճնշվեց։ Վերջին հայերը այստեղ ոչնչացվեցին Ուրֆայի կիրճերում և ջրհորներում։ Թուրքական զորքերը այդ կռիվներում կորցրեցին 50 սպանված, 120—150 վիրավոր[19]։

Ագանայի վիլայեթում իրենց հերոսական պաշտպանական մարտերով փառաբանվեցին Ֆունջակի, Կիշիֆլիի և Թերեքյոյի հայերը։ Մերժելով թուրքական իշխանությունների հրամանը արտաքսման մասին, նրանք հայտարարեցին. «Մենք ուզում ենք մեռնել որպես հերոսներ և ոչ թե ստրուկներ»։

1915 թ. օգոստոսի 1-ին 8000-անոց թուրքական զորքը գնդապետ Խալիբ բեյի գլխավորությամբ հարձակվեց Ֆունջակի վրա։ Թուրքական զորամասերը 24 կատաղի մարտեր մղելուց հետո, միայն 1915 թ. օգոստոսի 6-ին կարողացան տիրել Ֆունջակը[20]։

Դիարբեքիրի վիլայեթում թշնամուն համառ դիմադրություն ցույց տվեցին Մարդին քաղաքից դեպի հարավ-արևելք ընկած բնակավայրերի հայերը, որոնք ամրացան Սինջար լեռան վրա։ Այստեղ նրանք, ետ մղելով թշնամու գրոհները, կարողացան դիմանալ ամբողջ մեկ տարի[21]։

Թշնամուն զինված դիմադրություն ցույց տվեց նաև Իզմիտ ծոցի ափին ընկած հայկական գեղատեսիլ Պարտիզակ գյուղի ինն հազարանոց բնակչությունը։ Գիտենալով իրենց սպառնացող ճակատագրի մասին, պարտիզակցիները չենթարկվեցին արտաքսման հրամանին։ Այն ժամանակ նրանց դեմ ուղարկվեց ուժեղ ժանդարմերիայի ջոկատ, որին պարտիզակցիները դիմավորեցին կրակով։ Ժանդարմները նահանջեցին, կորցնելով 12 մարդ սպանված և վիրավոր։ Այդ նույն օրը նրանց դեմ ուղարկվեց ռազմական զորամաս, բայց այն նույնպես նահանջեց, կորցնելով 48 մարդ։ Միայն հետևյալ օրը հասարակական անվտանգության պետ Ջանփոլատ բեյի հրամանատարությամբ կոս-

---

[18] Տե՛ս ЦГВИА, ф. 2000с, л. 810, л. 180, „Кавказское слово", 21 апреля 1916, № 89, стр. 2. „Армянский вестник", 1916, № 15, էջ 9, «Կոչնակ», 8 հուլիսի, 1916, № 28, էջ 734։

[19] „Deutschland und Armenien", Dok. 180, 193, «Կոչնակ», 1 ապրիլի 1916։

[20] Տե՛ս «Ազդ», Պոսթոն, 28 հունվարի 1920, № 149 (1481)։

[21] Տե՛ս „Армянский вестник", 1917, № 29—30, էջ 15։

տանդնուպոլսից եկած թուրքական վաշտը, զինված 2 հրանոթով, ճնշեց պարտիզակցիների դիմադրությունը[22]։

Թուրքական ավազակներին հայ բնակչությունը դիմադրություն ցույց տվեց նաև ուրիշ վայրերում։ Շնորհիվ ինքնապաշտպանության և ռուսական բանակի հարձակման, ողջ մնացած հայերը գաղթեցին Կովկաս։

Ինքնապաշտպանության ելած հայերը պարզ տեսնում էին իրենց թշնամիներին՝ իթթիհատական կառավարությանը և նրա գործակալներին՝ քուրդ բեկերի ավազակախմբերին, թուրքական բանակին և ժանդարմերիային, իսկ թուրք և քուրդ խաղաղ բնակչության ու աշխատավոր զանգվածների նկատմամբ նրանք թշնամաբար չէին տրամադրված։ Այդ տեսակետից հատկանշական է Վանի հայերի կոչը ուղղված քաղաքի թուրք բնակչությանը, որի մեջ նշվում էր ստեղծված դրությունից դուրս գալու համար ազդել Վանի վալի Ջեվդեթի վրա՝ դադարեցնելու արյունհեզությունը։ Կոչում ասված էր, որ Ջեվդեթի նման կառավարիչները գալիս ու անցնում են, իսկ ժողովուրդները մնում են։ Բայց Ջեվդեթն ու նրա սպասավորներն ամեն ինչ արեցին, որպեսզի թուրք բնակիչները չլսեն Վանի պաշտպանների ձայնը։

Ինքնապաշտպանության դիմած հայերը մեծ թվով բարեկամներ ունեին քուրդ և թուրք աշխատավոր բնակչության մեջ, որոնք մշտապես կարեկցում և օգնում էին նրանց։ Օրինակ՝ քուրդ Հասանը, հայերի հետ բարեկամություն հաստատելու համար վաղուց ի վեր հետապնդվում էր թուրքական իշխանությունների կողմից։ Նա 1915—1916 թթ. ծառայում էր թուրքական զորքերին մատակարարող տրանսպորտում և օգնում էր պաշտպանվող սասունցիներին՝ նրանց մատակարարելով այլուր, ծխախոտ և տեղեկություններ հասցնում արտաքին աշխարհի մասին։

Կովաթ-Շափայի հայ բնակչության ութամսյա ինքնապաշտպանության մեջ ոչ քիչ դեր խաղաց թուրք Շեվքեթ բեյը։ Դիմադրության ամբողջ ժամանակաշրջանում նա հայերի շարքերում կռվում էր թուրքական զորքերի դեմ[23]։

Հայերի հետ հատկապես բարեկամաբար էին վերաբերվում զգլբաշ քուրդ գյուղացիները՝ դերսիմցիները։ Դերսիմցիները 1916—1920 թթ. իրենց մոտ թաքցրել և մահից փրկել են 20 հազար հայերի[24]։ Նրանք միաժամանակ կատաղի մարտեր էին մղում թուրքական զորքերի դեմ։ 1916 թ. մարտի 30-ին դերսիմցիների ջոկատները հասան մինչև Խարբերդ և պահանջվեց թուրքական 13-րդ բանակի հատուկ ջանքերը, որպեսզի ստիպեն նրանց ետ նահանջել[25]։

Հայերի պաշտպաններն էին նաև քուրդ-եզիդները, որոնք միայն Սանջար լեռան վրա (Մարդին քաղաքից դեպի հարավ-արևելք) թաքցրեցին մոտ 5000—6000 հայերի[26]։ Նույնը պետք է ասել նաև Մոկսի (Վանա լճից դեպի հարավ ընկած լեռնային տեղանք) քրդերի մասին, որոնց մոտ ապաստան գտան ոչ միայն Մոկսի հայերը, այլև Քարքարի շրջանի (Վանի վիլայեթ) երեք հազար և Վանի Կարճկան, Գավաշ, Շատախ և այլ շրջանների բազմաթիվ հայ բնակ-

---

22 Տե՛ս հունական «էֆիմերիս» թերթը, 1915, 8 սեպտեմբերի, «Կոչնակ», 1915, № 42, էջ 921։

23 Տե՛ս «Կոչնակ», 1916, 8 հուլիսի, № 28, էջ 734։

24 Տե՛ս Գ. Ս. Երևանեան, Պատմություն Ջարսանճակի հայոց, Պեյրութ, 1956, էջ 66։

25 Նույն տեղում, էջ 143։

26 Տե՛ս „Армянский вестник", 1917, № 29—30, էջ 15։

չությունը[27]։ Արևմտյան Հայաստանի լեռնային շրջանների գրեթե բոլոր քրդական գյուղերում հայտնաբերվում էին քրդերի կողմից թաքնված հայկական ընտանիքներ[28]։

Երիտասարդ թուրքերի կառավարության ջարդարարական քաղաքականության դեմ թուրք աշխատավորության ելույթները ամենից առաջ արտահայտվում էին կոտորածի և դեպորտացիայի միջոցառումներին մասնակցելուց հրաժարվելու ձևով։ Եղել են նաև ոչ-քիչ դեպքեր, երբ հասարակ թուրքերը, հաշվի չառնելով ոչ մի սպառնալիք, թաքցրել են հայերին կամ զենքը ձեռքներին հանգես են եկել ի պաշտպանություն նրանց։ Գրող Հաբել Եսայանը, որը իշխանություններից թաքնվել էր թուրք համաքաղաքացիների մոտ, բազմիցս լսել է նրանց անկեղծ կարծիքը հայկական կոտորածի մասին։ «Թուրքական ժողովրդական մասսան, — պատմում է Զ. Եսայանը, — որոշակիորեն դեմ էր այդ հետապնդումներին և դրանք իրականացնող կառավարությանը։ Հասարակ մարդկանցից հաճախ կարելի էր լսել, թե «սիրտդ վառվում է», երբ տեսնում ես, թե ինչ են անում հայերի հետ։ Բնակչությունը կատարվածի ողջ պատասխանատվությունը վերագրում էր «Միություն և առաջադիմություն» կոմիտեին ու գերմանացիներին, որոնց նկատմամբ կար թույլ քողարկված ատելություն»։ Երբ թուրքերից ինչ որ մեկը Եսայանի մոտ ասաց, որ հայերին հետապնդում են այն բանի համար, որ նրանք դեմ են պատերազմին, մյուսները խմբով պատասխանեցին. «Իսկ ով է պատերազմի կողմնակից։ Մենք՝ բոլոր թուրքերս դեմ ենք պատերազմին»-[9]։

Թուրքական կառավարությունը ճգնելով արդարացնել իր վայրագ գործողությունները հայերի նկատմամբ, 1916 թ. հրատարակեց «Ճշմարտությունը հայ ազգային շարժման և կառավարության միջոցառումների մասին» բրոշյուրը, որը օտարերկրյա մամուլի մի քանի օրգանների կողմից կոչվեց «Սպիտակ գիրք»[30]։ Այդ գրքում թուրքական կառավարությունը «մեղադրում» էր հայերին այն բանի համար, որ նրանք ռուսական զորքերի Արևմտյան Հայաստան ներխուժելուց անմիջապես հետո վերցրել են զենք և միացել նրանց։ Որպես ապացույց նա առաջ էր քաշում Վանի «ապստամբությունը»։ Իբր հայերի աքսորման մասին կարգադրությունը արված է եղել միայն այդ «ապստամբությունից» հետո այն նպատակով, որպեսզի կանխվի նրա տարածումը մյուս շրջանների վրա։ Սակայն թուրքական կառավարության այդ պնդումը մերժվում է փաստերով։

Ինչպես վերը արդեն ցույց տրվեց, Վանում տեղի չէր ունեցել հայերի և ոչ մի ապստամբություն, այլ եղել էր միայն տարերայնորեն ծագած ինքնապաշտպանություն, որի նպատակն էր պահպանել Վանի հայերին և նրանց մոտ ապաստան գտած ամելիներին՝ թուրքական կառավարության դատաստանից։ Եվ Վանի հայերը ձեռնամուխ եղան ինքնապաշտպանության կազմակերպմանը միայն այն բանից հետո, երբ ստեղծվեց քաղաքի հայկական թաղամասերի պաշարման վտանգը թուրքական զորքերի կողմից։

---

27 Տե՛ս Արտակ Դարբինյան, Հայ ազատագրական շարժման օրերին, Փարիզ, 1947, էջ 295, 308—310։

28 Տե՛ս „Армянский вестник", 1916, № 33, էջ 13—14։

29 Նույն տեղում, № 15, էջ 12—13։

30 «Սպիտակ գրքի» մի մասի թարգմանությունը տե՛ս ՀՍՍՌ ԿՊԱ, ֆ. 227, ց. 1, գ. 465, թ. 33։

Հայերի արտաքսումը Կիլիկիայից և Զեյթունից սկսվեց 1915 թ. մարտի 26-ին, իսկ Վանի ինքնապաշտպանությունը տարերայնորեն ծագեց միայն 1915 թ. ապրիլի 7-ին։

Ինչպես արդեն նշվեց, դեռ 1914 թ. օգոստոսին թուրքական զորքերը մտան Զեյթուն, ձերբակալեցին առավել մարտունակ զեյթունցիներին, տարան նրանց Մարաշ և այնտեղ գնդակահարեցին։

Դիմադրությունը ցույց էր տրված արտաքսումից միայն մի քանի օր առաջ, որպես պատասխան իշխանությունների ձեռնարկած միջոցառումների (բնակչությունից զենքի հավաքումը, մուհաջիրների՝ մուսուլմանական վերաբնակիչների կենտրոնացումը Զեյթունի գյուղերի շուրջը և այլն)։

Նույնը պետք է ասել արևմտահայերի դիմադրության կամ ինքնապաշտպանության մյուս բոլոր դեպքերի մասին։ Ինքնապաշտպանությունը տարերայնորեն ծագեց որպես ցասման, բողոքի արտահայտություն թուրք կառավարության չարագործությունների դեմ։

Չի կարելի մոռանալ նաև այն փաստը, որ հայ բնակչությունը զանգվածային ռեպրեսիաների ենթարկվեց Վանում կատարված ապրիլյան դեպքերից շատ ավելի առաջ։ Բնորոշ է, որ այդօրինակ կարծիքի էին և այն բոլոր հանրածանոթ օտար հեղինակները, որոնք զբաղվում էին հայկական ողբերգության հարցով (Բրայսը, Տոյնբին, Լեպսիուսը և ուրիշներ)։ Եվ ճիշտ էր հայ ականավոր գրող Շիրվանզադեն, երբ 1916 թ. ամռանը գրում էր, որ «Արևմտահայերի ողբերգությունը առաջ է եկել ոչ թե նրանց ելույթներով և նույնիսկ տեղական ապստամբություններով թուրքահայ գավառներում, ինչպես այդ ճգնում են ապացուցել որոշ քաղքենիներ։ Ընդհակառակը, և՛ դրուժինաների առաջացումը, և՛ տեղական ապստամբությունները առաջ են եկել թուրքական կառավարության անօրինակ գազանությունների հետևանքով»[31]։

Թուրքական կառավարությունը, խեղաթյուրելով փաստերը, արևմտահայերի տարերայնորեն ծագած և իրարից անջատ ինքնապաշտպանության կռիվները «Սպիտակ գրքում» ներկայացնում էր որպես միացյալ պլանով մշակված մի ընդհանուր դավադրություն։

Բայց դավադրություն ընդհանրապես չկար, հակառակ դեպքում պետք է լինեին նաև նրա կազմակերպիչներն ու ղեկավարները։ Թուրքական կառավարությունը չէր անվանում նրանց և չէր էլ կարող անվանել, որովհետև ոչ մի քաղաքական կուսակցություն կամ խումբ չէր ղեկավարում արևմտահայերի տարերայնորեն ծագած ինքնապաշտպանությունը։

Թուրքական պառլամենտի անդամ դաշնակ Վ. Փափազյանը, որը այդ ժամանակ գտնվում էր ջարդերի շրջանում և կարողացավ ժամանակին փախչել Կովկաս, իր հուշերում գրում է, որ Արևմտյան Հայաստանում գտնվելու ժամանակ չտեսավ որևէ կազմակերպություն, որը ի վիճակի էր նախապատրաստել հայերին առաջիկա դիմադրության համար[32]։

Վանի ինքնապաշտպանության մասնակից, հայտնի նկարիչ Փանոս Թերլեմեզյանը այդ մասին գրում է. «Ո՞ր մեկն ըսեմ. միթե բավական չե՞ն վերի օրինակները, ապացուցանելու որ բացարձակապես ժողովրդական պատերազմ

31 «Кавказское слово», 15 октября 1915 г., № 227, стр. 3.

32 Տե՛ս Վ. Փափազյան, Իմ հուշերը, հ. Բ, էջ 320—321։

էր աս և որը այս ու այն կուսակցության և անհատներու վերագրելը հիմնովին թյուրիմացություն մ'է»[33]։

Այն, որ հայերի «դավադրությունը», «ապստամբությունը» կամ «հեղափոխությունը» ցինիկաբար հորինված էին թուրքական կառավարության կողմից՝ իր սեփական ոճրագործությունները արդարացնելու համար, իր ժամանակին աշխարհին հայտնեցին Թուրքիայում հայ իրադարձությունների բոլոր գիտակները. գերմանացի Լեպսիուսը և անգլիացի Բրայսը, ֆրանսիացի Բարբին և ռուս Մանդելշտամը և ուրիշներ։

Հայերի գենոցիդը, որպես Օսմանյան կայսրության պետական քաղաքականության արտահայտություն, մշակվեց և իրականացվեց երիտթուրքերի կառավարության կողմից պանթուրքական և պանիսլամական պլանների հիման վրա։

Ст. М. Акопян

САМООБОРОНА ЗАПАДНЫХ АРМЯН В 1915—1916 ГГ.

Резюме

Во время проводимой младотурецким правительством массовой резни и депортации армян в 1915—1916 гг. западные армяне почти повсеместно поднялись на борьбу за право своего физического существования и показали в этой борьбе величайшие примеры отваги и мужества.

Очаги самообороны западных армян стихийно возникли в Ване, Шатахе, Битлисе, Шапин-Гараисаре, Муше, Сасуне, Мараше, Зейтуне, Хнусе, Харпуте, Байбурте, на горе Муса-Таг (Джебель-Муса), Урфе, Партизаке и других местах.

Однако оборонительные бои не имели единого организующего центра и они не носили характера восстания, как об этом цинично заявляли организаторы резни беззащитного армянского населения.

Геноцид армян в Османской империи, как выражение государственной политики, был выработан и осуществлен младотурецким правительством на основе его пантюркистских, панисламистских планов.

---

33 «Վան-Տոսպ», 1916, ապրիլ, № 22—23, էջ 11։